



Գագիկ Արշակի Հակոբյան

Ծնվել է 1955թ. Սեպտեմբերի 1-ին՝ Տափերեկյան(Կիրովի անվան սովխոզ) գյուղում:

1972թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը:1972-1973 թթ .աշխատել է դաշտում ՝ որպես բանվոր:

1973-1974թթ.ընդունվել և ավարտել է Երեվանի թիվ 2 տեխնիկական ուսումնարանը, ստացել է ապարատավարի որակավորում: 1974թ. ընդունվել է Երևանի Պետական համալսարան, որն ավարտել է 1978թ.՝ տնտեսագետ-հաշվապահի որակավորմամբ:

Այնուհետև աշխատել է Արարատի ՔաղԱռ-ում՝ որպես գների գծով տնտեսագետ:

1978-1980թթ. ծառայել է Սովետական Բանակում:1980-1997թթ. աշխատել է Արարատի ԲՄԲ-ում՝ որպես գլխավոր հաշվապահ:

1997-2001թթ. աշխատել է ԱՐԴՇԻՆԲԱՆԿԻ Արարատի մասնաճյուղում՝ որպես գլխավոր հաշվապահ:

2001-2002թթ. աշխատել է <<Որդի Հրաչ>> ՍՊԸ-ում՝ որպես գլխավոր հաշվապահ:

2002-2006թթ. աշխատել է <<Վան 777>> ՍՊԸ-ում՝ որպես տնօրեն:

2006թ հիմնադրել է <<ՏԱՎԻՆԿՈ>> գինու-կոնյակի գործարան ՍՊԸ-ն և աշխատում է նշված ձեռնարկությունում՝ որպես գլխավոր տնօրեն:

Ամուսնացած է, ունի երեք երեխա: